ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2025թ. թիվ 652-Ա

ԿԻՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման 3-րդ հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 49-րդ կետով, հիմք ընդունելով 15.10.2025թ. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի խորհրդականի և մարզպետի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության մասնագետների կողմից «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում իրականացված ուսումնասիրության ընթացքում հայտնաբերված խախտումները և ՊՈԱԿ-ի տնօրեն Կ.Պետրոսյանի 08.10.2025թ. բացատրությանը կից ներկայացված փաստաթղթերը, հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կ.Պետրոսյանի 22.10.2025թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Աշխատանաքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 48-րդ կետի 22-րդ ենթակետով և 72-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված պարտականությունների խախտման համար «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Աքորու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կ.Պետրոսյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Մ.Նահապետյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ էլեկտրոնային փոստի և ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով կամ պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2025-10-27 14:16:28 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 27
ք.Վանաձոր